

verso ordine anche nell'antigrafo) e tutta la problematica già accennata della scelta errore/variante. Il fatto centrale del passo è nella corrispondenza $\pi\acute{\alpha}\theta\omicron\varsigma$] $\text{յերկիր} = \epsilon\acute{\iota}\varsigma \tau\eta\nu \gamma\eta\nu$, in *terram*. Mi sentirei di escludere una variante greca $\epsilon\acute{\iota}\varsigma (\tau\eta\nu) \gamma\eta\nu$: più probabilmente un copista, di fronte al facilmente ipotizzabile *դործեաց կիր* avrà corretto in *երկիր* avendo in mente la consueta frase scritturale $\epsilon\rho\gamma\acute{\alpha}\zeta\epsilon\sigma\theta\alpha\iota \tau\eta\nu \gamma\eta\nu$] *դործել երկիր*. L'accusativo introdotto nel nostro contesto restava tuttavia assurdamamente insignificante: la semplice aggiunta di un *j* ha (in un secondo momento?) appianato la difficoltà⁴. La correzione di *յերկիր* in *կիր* (l'equivalenza $\pi\acute{\alpha}\theta\omicron\varsigma$] *կիր* è tecnica, cf. ad es. Arist. Cat. 4b8 = Conybeare 118,3) mi pare necessaria⁵.

La scelta tra testimoni greci maggiormente corrotti e corruzioni armene di testimoni greci presumibilmente meno corrotti è, per l'editore, problema grave e frequente nel *De Mundo*: aver richiamato l'attenzione su un fatto dal Lorimer non avvertito è per me, al di là del valore — discutibile — delle congetture esposte, l'obiettivo più immediato.

ANDREA TESSIER

4. Non so se l'inserzione di խչ possa essere legata in qualche modo alla necessità di attribuire a $\tau\omicron\theta\tau\omicron$, rimasto senza il nome, lo *status* pronominale.

5. Nerses Der-Nersessian mi segnala un'altra origine della corruzione: la *scriptio continua* *դործեացրկիր* ed una successiva divisione in *դործեաց րկիր* con l'inserzione della *ւ*. La desinenza di 3ª persona *-եացր* è tipica dell'armeno ellenistico.

ՋՈՒՂԱՅԵՑԻ ԽՕՋԱՅ ՍԱՖԱՐ ՈՒ ԽՕՋԱՅ ՆԱԶԱՐ ԵՒ ԻՐԵՆՑ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Տարիներ առաջ, «Հայրենիք» ամսագրի թիւերուն մէջ, յետոյ առանձին ալ արտատպումով, հրատարակեցի «Զուլայեցի Խօջայ Նազար եւ իր գերդաստանը» խորագրեալ մենագրութիւն մը: Անկէ ի վեր նորանոր նիւթերու յայտնութիւնը կը ստիպէ զիս վերստին գրել, այս անգամ աւելի ամբողջական բովանդակութեամբ, Զուլայեցի այս պատուական ու հին տոհմին մասին:

Առաքել Դաւրիթեցի կը պատմէ որ Շահ Աբաս Մեծ, Դաւրէժը Օսմանցիներէն գրաւելէ ետք՝ Երեւանի վրայ կը յարձակի, ու ճանապարհին կը հանդիպի Հին Զուլայ: Դաւրիթեցի թուական չի տար, սակայն այլուստ գիտենք՝ թէ Շահ Աբաս Դաւրէժը գրաւեց 21 Հոկտ. 1603ին, որով Հին Զուլայ հանդիպած պէտք է ըլլայ նոյն տարուան Հոկտեմբերին վերջը կամ Նոյեմբերի սկիզբները:

Դաւրիթեցի կենդանի ոճով կը նկարագրէ Շահ Աբասի Հին Զուլայ հանդիպելը եւ հոն ընդունուելը: Շահն ու արքունի հետեւորդները, կ'ըսէ, «յորժամ հասին ի գիւղաքաղաքն Զուլայ, ամենայն բնակիչքն Զուլայո՛ւ բազում եւ զանազան եւ պէսպէս յօրինուածովք պատրաստութիւնս հոգացեալ՝ ելին ընդ առաջ Շահին, որպէս վաճառորդի թաղաւորի: Իշխանք եւ ծերք եւ երիտասարդք՝ ի զարդ եւ ի յէնս ոսկէհունս սիրատեսիլ հանդերձից պճնադարձեալք ընդ առաջ ընթանային: Եւ նորաբողբոջ գեռահաս մանկունք՝ ոսկի բաժակաւ զանուհահամ եւ ազնիւ գինի մատուցանէին: Լուցեալ մոմեղինօք եւ խնկօք եւ կնդրկօք քահանայք եւ մարմնաւոր երգեցիկք առաջի ընթանալով յարմարական ձայնիւ նուագէին: Եւ զճանապարհս անցից թանալով յարմարական ձայնիւ նուագէին: Եւ յեզերէ գետոյն մինչեւ ցապարանս Խօջայ արքայի զարդարեցին. եւ յեզերէ գետոյն մինչեւ ցապարանս Խօջայ արքայի զարդարեցին. եւ յեզերէ գետոյն մինչեւ ցապարանս Խօջայ արքայի զարդարեցին (ծանրագին զիպակ՝ թագաւորի ընդունալիս արկին փայլանդագ (ծանրագին զիպակ՝ թագաւորի ընդունալիս արկին փայլանդագ (ծանրագին զիպակ՝ թագաւորի ընդունալիս արկին փայլանդագ — Յ. Գ.) առաթուր նկուլթեան ատեն անոր ոտքերուն տակ փռուած — Յ. Գ.) առաթուր

1. Հմմտ. «Հայրենիք» ամսագրի (Պոսթըն), ԻԱ. տարի (1943) թ. 4 (Յուլիս-Օգոստ.) էջ 72-82, թ. 5 (Սեպտ.-Հոկտ.) էջ 63-73, թ. 6 (Նոյ.-Դեկտ.) էջ 69-87:

Իր եղբոր հետ պլխաւոր դերակատարներէն մին եղած է Ս. Հռիփսիմէի նշխարներուն գիւտին յաջորդող գէպքերուն մէջ: Առաջել Դաւրիժեցի պատմելով Ս. Հռիփսիմէի կարծեցեալ նշխարներու գիւտին մասին, կ'ըսէ թէ Դաւիթ Կաթողիկոս Սպահան գտնուող Երեւանցիներու հետ զի միասին գնացին ի մէջ Ջուղայեցւոց առ Սոջայ Սաֆարն՝ որ էր աւագ Ջուղայեցւոց, ոչ միայն Ջուղայեցւոց, այլ եւ ամենայն ազգին Հայոց՝ որք կային ի ներքոյ Թազաւորութեանն Պարսից. քանզի յոյժ ընդունելիք էին Սոջայ Սաֆարն եւ եղբայրն իւր Սոջայ Նազարն առաջի Պարսից Թազաւորին եւ իշխանացն նորա, եւ ծանուցին Սոջայ Սաֆարին զայն գործ (Գիւտ եւ գողութիւն նշխարաց): Եւ Սոջայ Սաֆարն եւ կաթողիկոսն եւ աղայ տէրտէրն, որ էր աւագ՝ Երեւանցւոց, ի միասին գնացին առ քաղաքապետն՝ որում անունն էր Միրզայ Մահմատ, զոր շահն կարգեալ էր քաղաքապետ Ասպահանու, վասն զի շահն ո'չ էր Ասպահան յայսմ ժամանակիս, այլ ի Թարվէզ էր. նաեւ Սոջայ Նազարն եւս անդ էր առաջի շահին: Եւ յետ ծանուցանելոյ քաղաքապետին՝ առեալ զօրականս ի նմանէ գնացին յանկարծակի ի վանքն Փռանկաց, եւ բացեալ զասացեալ տան դուռն՝ գտին զսնդուկն նշխարովն: Եւ առեալ բերին զնշխարալի սընդուկն առ քաղաքապետն, եւ նա կնքեալ է զսնդուկն իւրով մատանեալն եւ տուեալ ց'Սոջայ Սաֆարն յաւանդ՝ առ ի պահել զնա մինչեւ ցգալն Շահին եւ ի խնդրել զնա: Ձայս ամենայն գործոց անցուածք եւ որպիսութիւնք Սոջայ Սաֆարն եւ Դաւիթ Կաթողիկոսն գրով ծանուցեալ են Սոջայ Նազարին՝ որ էր ի Թարվէզ: Եւ Սոջայ Նազարն, քանզի համարձակ էր առաջի Շահին, ծանոյց նմա, եւ խնդրեաց ի Շահէն զթուղթ հրամանաց, եւ ծառայ Թազաւորական առաքել զկնի պատրեացն՝ որք զնշխարսն հանին, զի կալեալ զնոսա անցէ առաջի Թազաւորին. եւ Շահն արար զամենայն կամս Սոջայ Նազարին»⁹:

Շահին հաւանութեամբ Սբ. Հռիփսիմէի նշխարները կը ղրկուին Սպահան: «Եւ ապա գրեալ է Շահն թուղթ յԱսպահան առ Սոջայ Սաֆարն, թէ յաղագս շնորհի երեսաց ձերոց՝ եւ ըստ յօժարութեան սրտից ձերոց, առի զնշխարս սրբոցն ձերոց ի Փռանկաց եւ պարգեւեցի ձեզ, եւ արդ՝ առաքեցի առ քեզ յաւանդ պահեստի. արդ՝ ընկալ զդա եւ պահեա ցործամ խնդրեցից, բերեցես առաջի իմ. եւ Սոջայ Սաֆարն առեալ եւ ընկալեալ ըզնշխարսն եւ ի տան իւրում պատրաստեալ տեղի պատշաճաւոր, եւ անդ էր հանգուցեալ, եւ ըստ արժանւոյն սրբութեանցն յամենայն աւուր պաշտէր զնոսա անուշահոտ խնկօք եւ պայծառ մոմեղինօք»¹⁰:

Սոջայ Սաֆար եւ իր եղբայրը՝ Սոջայ Նազար, եւ իրենց ժառանգները, զլխաւոր դերակատարները եղած կ'երեւին Աջերու եւ նշխարներու յաջորդական գիւտերուն եւ փոխադրութեանց մէջ: Գաղթական Ջուղայեցիները հազիւ Սպահան հաստատուած, քեղի կ'ունենայ Յովհաննու Կարապետի նշխարներու գիւտը: Նշխարները կ'անցնին Շմաւոն Եպիսկոպոսին ձեռքը, սակայն Սոջայ Նազար եւ Ջուղայեցիները կը յաջողին նշխարներու մեծ մասը ձեռք բերել: Զարմանալիօրէն, եթէ իրապէս նշխարներու այս գիւտը պատահած է 1605էն կարճ ժամանակ վերջ առեն մը, Սոջայ Սաֆար չի յիշատակուիր Դաւրիժեցիի այս վկայութեանց մէջ, որոնք առաջ պիտի բերենք ամբողջութեամբ: Սոջայ Նազարի մասին խօսած ատեննիս:

Շահ Աբասի մեծ մտադրութիւններէն մէկն էր լատին զինուորական աջակցութեամբ՝ երկու կրակի մէջ առնել Թուրքիան, եւ կը կարծէր թէ ատոր համար կարեւոր խայծ մըն էր էջմիածնի Կաթողիկոսին տեղ զահ բարձրացնել Պապէն ղրկուած հռոմէադաւան կրօնաւոր մը: Այս նիւթին մասին մեզի հասած է վաւերաթուղթերու եւ վկայութեանց կարեւոր շարք մը, որոնց մասին կ'արժէ մանրամասնօրէն ուսումնասիրութիւն մը մշակել օր մը:

Շահ Աբասի մէկ ուրիշ մտադրութիւնն էր էջմիածնի տաճարը քար առ քար հանել իր տեղէն ու փոխադրել Սպահանի մօտ տեղ մը եւ հոն վերակառուցանել զայն, տղայամտօրէն խորհելով՝ թէ բռնի ուժով դադթական այդ Հայերը այլեւս պիտի չցանկային դառնալ իրենց հայրենիքը: Արդարեւ, եթէ Շահն հետապնդէր իր այդ սխալ խորհուրդը, ատիկա էջմիածնի վանքին ու սրբատեղիին համար իրապէս աղիտալի պիտի ըլլար: Սակայն, փոթորիկը անցաւ՝ էջմիածինէն լոկ տասնեւհինգ քարերու Նոր Ջուղայ փոխադրութեամբ: Աւելի անվնաս էր Լուսաւորչի Աջին փոխադրութեան գաղափարը: Այլ բերողները, որոնք Աջին հետ կը բերէին նաեւ ոսկեկազմ Աւետարան մը եւ արծաթեայ խաչ մըն ալ, «յորժամ մերձ եղեն քաղաքին Ասպահանու, ամենայն ազգն Հայոց, որք կային ի քաղաքս Ասպահան, որոց եւ հրաման արարեալ էր Շահն, ելին ընդ առաջ Լուսաւորչի Աջոյն՝ խաչվառով եւ Աւետարանաւ, խնկօք եւ մոմեղինօք, եւ երդօք եղանակօք, եւ բազում պատուով բերեալ հանգուցին ի տուն Սոջայ Սաֆարին, ընդ նշխարաց սրբուհւոյ կուսին Հռիփսիմեայ, եւ ընդ այլոց սրբութեանցն, որք ասդէն վային»¹¹:

Նշխարներու գիւտի, Աջի եւ այլ սրբութիւններու Նոր Ջուղայ փոխադրութիւնը, անտարակոյս, իր ազդեցութիւնը ցնեցաւ՝ բռնի գորութեամբ դադթական հայրենակարօտ զանգուածին վրայ, որ ըստիպուեցաւ գոհանալ ու մնալ իր տեղը: Շահեկան է Շահին պա-

11. Ամդ, էջ 211:

9. ԱՌ. ԴԱՒՐԻՃԵՑԻ, Պոս. էջ 186-187:

10. Ամդ, էջ 192:

տրաստակամութիւնը՝ այդ ուղղութեամբ գործակցելու խօշալ Սաֆարի եւ խօշալ Նազարի հետ:

Դաւրիժեցի կը պատմէ նաեւ որ «Յետ ժամանակաց անցելոց պատմութեանցդ (գիւտին նշխարաց), զոր յառաջդ պատմեցաք, եկեալ է Շահն յԱսպահան, եւ ըստ հանապազորդ սովորութեան իւրում եկեալ է ի տուն խօշալ Սաֆարին. պատահեալ են եւ անդ ոմանք պատրիկ¹². եւ ի մէջ խօսից յիշեալ են զնշխարս սրբոց Հռիփսիմեանց, եւ բերեալ են զամենայն նշխարս սրբուհւոյն Հռիփսիմեայ առաջի Շահին, ի տեսութիւն ամենեցուն: Եւ յորժամ բացեալ են զնշխարն, յայնժամ պատեհ ժամ դտեալ են պատրիկը, եւ ի Շահէն խնդրեալ են իբրեւ զպարգեւս տալ նոցա մասն ինչ ի նշխարացն այնոցիկ: Եւ Շահն ինքն առեալ է ոսկր մի յոսկերացն, եւ զայն եւս դանակաւն հարեալ է եւ կտորեալ, զկէս ոսկերն դարձեալ ձգեալ է ի մէջ այլ եւս նշխարացն, եւ զկէսն տուեալ է ի պատրիկսն. եւ նոքա առեալ են եւ ամփոփեալ յինքեանս: Եւ զայլ եւս նշխարսն զհասարակն, հրամայեալ է խօշալ Սաֆարին տանել եւ պահել. եւ նա բարձեալ ի միջոյ եւ տարեալ ի տեղին՝ ուր յառաջն եղեալ էր, եւ կայ անդէն մինչեւ ցայսօր»¹³: Մեր պատմիչը, զԺբախտաբար, զէպլին թուական չի տար: Այլուստ, սակայն, անտարակոյս գիտենք թէ Շահին այս այցելութիւնը եւ նշխար-ոսկորին Շահէն կտորուրը պատահած է խօշալ Սաֆարի մահէն յետոյ, իր եղբոր խօշալ Նազարի օրով: Կ'երեւի թէ Հռիփսիմեանց նշխարները գտնուելէն ի վեր՝ խօշալ Սաֆարի տունը մասնաւոր տեղ մը կը պահուէին եւ դեռ հոն էին մինչեւ Ռձէ (1658), երբ Դաւրիժեցի Սպահան կ'այցելէ, Յակոբ Կաթողիկոս Զուղայեցիին հետ, ու կը գրէ. «Գնացաք ի տուն խօշալ Սաֆարին յուխտ եւ յերկրպագութիւն նշխարաց Սրբուհւոյն Հռիփսիմեայ, եւ այլ յորով նշխարաց՝ որք կան անդր»¹⁴:

խօշալ Սաֆարի մասին ծանօթութեան պատահիկներ կը գտնենք Սպահանէն զրուած Կարմեղեան քարոզիչներու նամակներուն մէջ: Փրա Ճան Թատէուս, 1616ի Մարտ 26ին, կը գրէ Հռոմ, տեղեկացրելով որ Սպահանի Կարմեղեան վանքին շինութեան ատեն՝ «չուղեցի Հայեր աշխատցնել, մինչեւ որ խօշալ Նազար եւ խօշալ Սաֆար ինծմէ խնդրեցին՝ զանոնք ալ շինութեան համար վարձել»¹⁵:

1972ին, Նոր Զուղայ այցելած ատենս, խնամքով ընդօրինակեցի խօշալ Սաֆարի տապանադիրը, զոր ամբողջապէս կը ներկայացնեմ

12. Իտալերէն Padre (փադրէ) բառէն, տիպոս՝ որ կը տրուի վարդապետներուն, եւ կը նշանակէ՝ Հայր:

13. ԱՌ. ԴԱԻՐԺ., Պտմ., էջ 197:

14. ԱՌ., էջ 198:

15. A Chronicle of the Carmelites in Persia, 1939, London, Vol. I, էջ 232:

այստեղ, սրբադրելով Տէր Յովանեանցի պակասաւոր հրատարակութիւնը.

«ԱՅՍ Է ՇԻՐԻՄ ԳԱՄԲԱՐԱՆԻ
ԽՕՁԱՅ ՍԱՖԱՐ ԻՇԽԱՆ ԲԱՐԻ
ՈՐ Է ԵՂԵԱԼ ԱՅՍ Տ(Ա)ՊԱՆԻ:
ԻՐ ՍԱ ԱՄԱՅ ԾԵ.Ի (55),
ԹՎԻՆ ՀԱՅՈՑ Ռ. ԱՄԻ
ԿԷ ՕԵԼՈՐԴԻ.
ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ՊԱՔ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ.
ՍԱ ՕԱՆԴԵԱՅ ԱՌ Տ(Է)Ր Հ(Ո)ԳԻ.
Ք(ՐԻՍՏՈ)Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ ԻԻՐՆ ՈՂՈՐՄԻ»:

Նոյն թուականին, Նոր Զուղայի խօշալ Ս. Գէորգ եկեղեցւոյն խորանին պատուանդանին քարին մէկ երեսին վրայ արձանագրուած գտայ.

«ԽԶՍ ՅՇՏԿ Է - ՍՈՒԼԹԱՆ Փ - ԱՇԷ» (երեք տողի վրայ), այսինքն՝ «Խաչս յիշատակ է Սուլթան Փաշէ»:

Գտայ նաեւ խօշալ Սաֆարի կնոջ Սուլթանփաշէի տապանաքարը, նոյնպէս Նոր Զուղայի գերեզմանատան մէջ, ուր թաղուած է 1607ին.

«ԱՅՍ Է ՀՆԳՍՏՍ
ՍՈԼԹԱՅՆՓԱՇԷ
ԵՒ ԿԼԿՑ ԽՕՁԱՅ
ՍԱՖԱՐԻՆ
ԹՎԻՆ ՌԾՁ»

Այսինքն՝ «Այս է համգստարանս Սուլթանփաշէ եւ կողակից Խօշալ Սաֆարին, ԹՎԻՆ ՌԾՁ (= 1607)»:

խօշալ Սաֆար իր հօր խօշալ խաչիկի Յայմաւուրդին մէջ 1604ին յիշուելէ զատ, ուրիշ ձեռագիրներու մէջ ալ կը յիշատակուի: Այսպէս, իմ հաւաքմանս թիւ 140 Յայմաւուրդին մէջ, ուր մաս մը (37 թերթ), գրուած է խօշալ Վաթանի համար, կը կարդանք այսպէս. «... ստացողի գրոցս խաչալ Նազարին եւ կողակցին իւրոյ. որդւոցն Պարոն Սարֆրազին, Էլիազին, Վաթանին. եւ եղբորն՝ խաչալ Լոցն Պարոն Սարֆրազին, խաչիկին, Մամին»: Զեղագիրը 1659 Սաֆարին եւ ծնաւդացն խօշալ խաչիկին, Մամին»: Զեղագիրը 1659 թուականէն է, ուրեմն՝ խօշալ Սաֆարի մահէն բաւական վերջ գրուած:

Իր գերեզմանին համար ըստ կարեւոր է իր որդւոյն «Պարոնաց պարոն» Զալալ Բէկին յիշատակարանը, զոր կը ներկայացնեմ

ստորեւ, առնելով Նոր Զուղայի հաւաքման թիւ 477 մագաղաթեայ Աւետարանէն (թղ. 2բ)։

«Ըստացողին, պարոնաց պարոն Զալալ Բէկին,
Եւ ընտանեացն իւրոց բնակին,
Եւ հաւրն իւրոյ պայագատին,
Խաւջա Սափար բարեբաստին,
Մօրն իւրոյ Սաւթանփաշին,
Լուսով լցուի իւրեանց հոգին։
Այլ եւ եղբարք իւր նագելի,
Որ ի հասակս երեք տասին,
Փոխի առ տէրն իւր ցանկալին։
Ապա երկրորդ եղբայր սարին,
Խօջայ Փռանգուլն գովելին,
Նաեւ երրորդ եղբայր սարին,
Խաւջայ Սաւթանն բաղձալին.
Եւ Զալալ Բէկն՝ ստացող սարին,
Կրտսերագոյն քան զնոսին,
Բայց հանճարով լի եւ անքերին,
Անտաւամիտ յոյժ գովելին։
Այլ եւ պապուն իւրեանց մեծին,
Իշխանաշուք Ազա Խաչկին.
Իւրեանց հանիկն հեղահոգին,
Խոնարհամիտ Մարիամին։
Եւ հաւրեղբայր Զալալ Բէկին,
Պարոն Նազար մեծ խաւջային.
Այլ եւ Պարոն Սինան Բէկին,
Որ վաղնանի տղայ հասակին։
Այլ եւ որդիք Մէլիք աղին,
Պարոն Մուֆէյլն ընդ Խաչկին,
Սինան, Բագումն, Սօթանփաշն,
Մնան անփորձ հաղբից չարին։
Նոյն եւ որդիքն Փռանգուլին,
Բարայն ընդ Մէլիքնիազին,
Մուսէս Մուզամն ընդ Մարիամին,
Յերկար ամօք ոչ սասանին։
Այլ եւ որդիք Սաւթանումին,
Սափար, Վալաթն ընդ Լէլումին,
Լիով աւուրբք ասդէն անին.
Մինչեւ որ գորդիս որդոց տեսցին։
Զոր եւ տացէ տէր Զալալին,

Բարի որդիք ընդ դասերին,
Որդիս ազնիւ եւ դուստր նորին,
Որ Ուգուհի վերաձայնի»։

Խօջայ Սափարի որդիներն էին Մէլիք աղա, Խօջայ Փռանգուլ,
Խօջայ Սուլթան կամ Սուլթանում, Զալալ Բէկ։ Տեսնենք այժմ ա-
նոնց մասին պատմական տուեալները, յաջորդաբար անցնելու հա-
մար Խօջայ Սափարի եղբոր եւ անոր գերդաստանին պատմութեան։

ՄԵԼԻՔ ԱՂԱ

Խօջայ Սափարի եւ Սօլթանփաշի երէց որդին էր Մէլիք Աղան։
Ան կը յիշատակուի 1604ին, Խօջայ Խաչկի Յայսմաւուրքին մէջ,
Հին Զուղայ։ Զինք կը յիշէ նաեւ Առաքել Դաւրիթեցի, երբ կ'ըսէ.
«Շահ Աբաս առնէր սէր ընդ աղբին Հայոց եւ մեծարան նոցա. եւ
մանաւանդ ընդ Զուղայեցւոց, որոց զլիակորի անուն էր Խօջայ Սա-
փար, եւ սորին եղբօրն՝ Խօջայ Նազար, եւ որդւոց սոցին՝ Մէլիք Ա-
փար, եւ Սուլթանում եւ Սարֆրազ։ Եւ հանապազ ինքն Շահն զայր ի
ղայ եւ Սուլթանում եւ Սարֆրազ։ Եւ հանապազ ինքն Շահն զայր ի
տունս նոցա, ուսէր ընդ նոսա զկերակուրս նոցա՝ առանց խտրելոյ,
որպէս սովորութիւն է Պարսից առնել խտրութիւն ընդ քրիստոնէից.
այլ եւ ինքն Շահն կոչէր զնոսա ի տուն եւ ի սեղան իւր, եւ պատուէր
ընդ մեծամեծս իւր. այլ եւ պատուիրեալ էր իւրոց նախարարաց նոյն-
պէս առնել»¹⁶։

Մէլիք Աղայի մասին քիչ են մեր ծանօթութիւնները։ Կը թուի
եղած ըլլալ գրասէր մէկը։ Նիւ Եօրքի 42րդ փողոցի եւ Ֆիֆո Եւլը-
նիւի Մատենադարանին ձեռագիրներու բաժնին մէջ՝ կը գտնուի հա-
յերէն ձեռագիր Ժողովածոյ մը (թիւ 1), ուր կայ 94 տուննոց յան-
գաւոր «Յիշատակարան Աստուածաշունչ գրոց, արարեալ նոյն Ստե-
փանոս երէց որդի Ստեփանոսի, ի խնդրոյ Պարոն Մէլիք Աղային,
որդոյ Խաւջայ Սափարին»։ Կը սկսի.

«Ի թուականիս մեր Հայկագեան,
Որ էր անցեալ քսան յոթիւնան,
Այլ եւ երեսուսան աւելի լման,
Գրեցաւ շունչս աստուածական»։

Տրուած թուականը կրնայ ըլլալ Քրիստոսի 1621ը։
Երկարաշունչ ոտանաւորը կ'աւարտի այսպէս։

«Իսկ ես մուստ աման ամարժան,
Տէր Ստեփանոս մեղացման,
Զարեաւ լըցեալ բարեաց ունայն,

բազմաթիւ ուրիշ տապանադրերու հետ, եւ առաջին անգամ ըլլալով հոս կը հրատարակեմ: 22 տողնոց, երկաթազիր տապանազիր մըն է, յանգաւոր:

«Այս է շիրիմ եւ բնակարան եւ խորափիտ գերոզ մարդկան, Աստ կա եղեալ Մէլիք Աղայն: Խոնարհոգի Պ(ա)րոն Խօջայն: Իր սա յամաց չորս իմնական, վայելչագեղ տիպ ամնման, Հայոց մեծաց Բովական, որ էր անցեալ կրկին շրջան: Այլ եւ է քիւ աւելի լման, փոխեցաւ սա հոգոց կայան. Մեծ որդ(ի)ն սայ է Խօջային, Սափար ամուսն ալր պատուական. Յորժամ որ գա ի դատաստան, Յ(խու)ս Գ(րիստո)ս անմահ արքայն, Ի յերկնային արքայութեան, արժան առնէ զՄէլիք Ա(ղ)այն. Ամէն: Թվ(ի)ն Ռ.Հ.Ա. (1622):»

Տապանադրին համաձայն՝ Մէլիք Աղան մեռած ըլլալով «յամաց չորս իննական» ($=4 \times 9$), այսինքն՝ 36 տարեկանին (1622ին), ուրեմն՝ ծնած ըլլալու է 1586ին: Այս 36ին կ'ակնարկէր Թերեւս վերեւ մեր Թուարկած յիշատակարանին «ի հասակս երեք տասին» բացատրութիւնը:

Իր տապանին մօտ կը գտնուի նաեւ կնոջ շիրիմը, որուն վրայ կը կարդամ.

«Այս է շիրիմ եւ դիատուն
Աստ կա եղեալ Խաթուն Նաշխունն
Թվին Ռ.Ե. եւ Զ. ($= 1636$),
Մահուամբ փոխի յամնահուքին»:

ԽՕՋԱՅ ՖՈՒՆԳՈՒԼ

Խօջայ Սափարի երկրորդ որդին է Խօջայ Ֆոանդուլ: Ինք է վերջին ստացողը Նոր Զուղայի հաւաքման Թիւ 36 մազաղաթեայ Աւետարանին, որ իր մանրանկարչութեամբ շատ կարեւոր ձեռագիր մըն է, Իզնատիոս մանրանկարիչի ձեռքէն¹⁸: Ընտանիքի ճիւղազրուծեան տեսակէտով շատ չահեկան յիշատակարան մըն ալ հոս կայ, զոր կ'արտադրեմ.

«Զվերջին ստացող աստուածազարդ եւ հոգէբուխ սուրբ Աւետարանիս Պարոն Ֆոանդուլն, որ ետ վերստին նորոգել զսայ ի Թվին Ռ.Հ. (1621), յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց. հաւրն իւրոյ առատայմիտ եւ հեղահոգի պարոնաց պարոն Խօջայ Սափարին, եւ

18. Յիշեալ Թ. 36 ձեռագրի մանրանկարներուն մասին ընդարձակօրէն խօսած եմ «Ամանիտ» մէջ, բազմաթիւ նկարներու նմանահանութեամբ (տպ. Փարիզ, 1939, Թ. 3, էջ 32-44):

մօրն Սուլթանփաշէ, եւ եղբարց իւրոց սիրեցեալ եւ պատուեալ յաշտ թաղաւորաց Պարոն Մէլիք Աղէն, Պարոն Սուլթանուսն, Պարոն Զաւալն: Դարձեալ յիշեցէք ըզԽօջայ Ֆոանդուլն եւ զկողակիցն իւր Բաւլն: Եւ զղըստերէն իւր Շամսղամարն, եւ զորդիքն Մէլիք Աղին՝ Միջայէլն, Սաշիկն, Սիննան, Մէլիք Նիազն, եւ զորդի Սուլթանուսին՝ Սափարն»:

Խօջայ Ֆոանդուլ կը յիշուի Խօջայ Սաշիկի Յայաֆաւուրդին մէջ, 1604ին, Հին Զուղայ: Չենք գիտեր թէ երբ ամուսնացած է. կնոջ անունն է Բարէ: 1621ին, վերոյիշեալ Թիւ 36 ձեռագրին համաձայն, Խօջայ Ֆոանդուլ ունէր Շամսղամար անունով դուստր մը: Իսկ Թիւ 477ի Յիշատակարանին գրութեան ժամանակ (Թուականն անյայտ), Շամսղամար չի յիշուիր, այլ «որդիքն Ֆոանդուլին, Բարայն ընդ Մէլիքնիագին, Մուսէս, Մուղամն ընդ Մարիամին»:

1972ին, նոյնպէս գտայ Խօջայ Ֆոանդուլի գերեզմանաքարը, երկաթազիր 15 տողնոց արձանագրութեամբ, զոր հոս կ'արտադրեմ. «Տ(է)ր և Ա(ստուա)ծ Հօր միածին Յ(խու)ս Գ(րիստոս) որդի Կուսին, Տուր քաղութիւն Պարոն Խօջին Ա(ստուա)ծաւր Ֆոանդուլին, ՌՁԳ (1634) Թվին սա փոխեցօ յաշխարհ վերին, Փառօք յառնէ ցօրն վերջին ամէն»:

Ուրեմն, Խօջայ Ֆոանդուլ մեռած է 1634ին: Իր որդիներէն՝ Պարոն Բար կը մեռնի 1641ին. Մուսէս կամ Մուսէս՝ 1635ին, հաղիւ Խօթնամեայ. Մէլիքնիագ՝ նոյնպէս 1635ին:

1972ին գտայ առնց ալ տապանաքարերը, իրարու շատ մօտիկ, նոյն գերեզմանատան մէջ. ահա անոնց արտադրութիւնը.

«Այս է տապան եւ բնակարան խաջագատայ Պարոն Բարին, Թվին Ռ.Ղ (1641) յաւուր մեծի դատաստանին»:

«Այս է շիրիմ մանուկ Մովսէսին, որ ի Թվին ՌՁԳ (1635) փոխեցաւ առ Տէր, եւ էր է (7) ամաց»:

«Այս է տապան մանուկ Մէլիքնիագին, որ Թվ(ի)ն ՌՁԳ (1635) փոխեցաւ առ Գ(րիստո)ս, եւ էր իմքն իմն ամաց»:

Այս երկու մանուկները մեռած ըլլալու են, հաւանաբար, փոխանցիկ հիւանդութեան պատճառով:

1621ի Աւետարանի Յիշատակարանին համաձայն՝ Խօջայ Ֆոանդուլի կինը կը կոչուի Բարէ, ինչպէս տեսանք: Մական, 1972ին, Նոր Զուղայի գերեզմանատունը, իմ գտած տապանաքարի վրայ տարբեր անուն մը կայ.

«Եւ էր Թվին հազար ամի ութսուն եւ հինգ քիւ աւելի (1636) Խարշիկն վախջանի, կին էր սա Խօջայ Ֆաանդուլին, Որ էր տոհմաւ քաջագի, տ(է)ր Ա(ստուա)ծ արա արժանի Միջմարդութ(եամ)ք ս(րբոյ) Կուսի, յաւուր մեծի դատ(ա)ստ(ան)ի»:

Ջուղայի գերեզմանատան մէջ, 1972ի այցելութեանս ընթացքին. երկաթագիր գրութիւն մըն է, զոր կ'արտագրեմ այստեղ ամբողջութեամբ:

«Այս է տապան Պարոն Խօջին,
Ա(ստուա)ծաւէր Զալալ Բէկին
Որ ի ՌՂ ՔՎ(ի)ն
Այլ եւ Բ. աւելորդին,
Սա փոխեցօ յաշխարհ վերին.
Ի հարկանել փողո մեծին,
Եւ ի ծագել սրբո խաչին,
Սա բերկրեցի լուսով նորին,
Եւ արդարեցն երամին,
Սա եղիցի հաղորդ նոցին.
Լսէ ըզգայն կենարարին,
Եթէ եկայք օրհնեալք Հօր իմ. Ամէն»:

Զալալ Բէկն ալ կ'երեւի թէ երկու անգամ ամուսնացած էր: Նոր Ջուղայի թիւ 477 ձեռագրին մէջ կը յիշատակուին այսպէս. «Դարձեալ յիշեցէք զԶալալբէկն եւ կողակից իւր Թիլիկն. ամէն: Դարձեալ յիշեցէք Զալալբէկն եւ միւս կողակիցն Լարիխանն եւ զորդին Շահմուրատն, եւ զստերացն Ուզուհի, Սուփիանէն: Դարձեալ յիշեցէք Զալալբէկն եւ զփեսայն Յակոբջանն եւ կողակիցն Ուզուհի, եւ որդւոյն սորայ՝ Զանիբէկն, Սաֆարաղէն եւ Շահմուրատն: Եւ զստերացն Թալլուխանին, Սաթուրաղէն եւ Սարալու Սանուսին, Շահփարէն եւ Սուլթանփաշէն. ամէն:

(Շար. 1)

Թ. ՔԻՒՐՏԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍ՝ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻՆ ԱՌՋԵԻ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱԽԵՏԱՐԱՆԻԺ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1975. Բ. 1-2, էջ 181-201)

ԶՈՐՐՈՐԴ ԱԽԵՏԱՐԱՆԻՆ ՀԵՂԻՆԱԿ

Յովհաննէս՝ աւետարանիչ ծնած է Բեթսայիդա: Հօրը անունը Զերեդէոս էր, մօրը՝ Սողոմէ, իսկ եղբորը՝ Յակոբոս:
Հօրը եւ եղբորը նման, անիկա արհեստով ձկնորս² էր: Յիսուսի հետեւելէ առաջ, աշակերտած է Յովհաննէս Մկրտչին³:

Յովհաննէս՝ առաքեալներու ամէնէն փոքրը, Յիսուսի նախասիրած աշակերտն էր⁴: Յիսուս «որոտումի որդիներ» մակղիւրը տուաւ իրեն եւ իր եղբոր՝ իրենց կրակոտ բնաւորութեան համար:

Յովհաննէս, Պետրոս եւ Յակոբոս առաքեալները կը կազմեն այն երջանիկ խմբակը, որ արժանի եղաւ, Թաթօր լեռան վրայ՝ ահանատես ըլլալու Քրիստոսի լուսաշող այլակերպութեան⁵ եւ ներկայ դէպքերու Յայրոսի մեռած աղջկան յարութեան հրաշքին⁶:

Գեթսեմանիի պարտէզին մէջ, Յիսուս վերոյիշեալ երեք առաքեալները հետը առնելով՝ բաժնուեցաւ միւս առաքեալներէն եւ առանձնացաւ աղօթելու համար⁷:

Երբ Յիսուս երուսաղէմ կ'ելլէր, Յովհաննէս եւ Յակոբոս առաքեալներու մայրը կը մօտենայ Յիսուսի եւ անկէ կը խնդրէ, որ իր զաւակներէն մէկը՝ իր աջ կողմը, իսկ միւսը ձախ կողմը նստի, արքայութեան մէջ: Այս առաջարկը կը մերժուի Յիսուսի կողմէ⁸:

1. Յովհաննէս բառը, յունարէն Ἰωάννης, եբրայական ծագում ունի, «Նրնհա-նան» կամ «Նոնհանան» բարդ բառ մը, որ կը նշանակէ «Նահլէ, շնորհ տուր»:

2. Մատթ. Դ. 21:

3. Յովհ. Ա. 37 եւ 40:

4. Յովհ. ԺԳ. 23:

5. Մատթ. ԺԷ. 1-9:

6. Ղուկ. Ը. 49-56:

7. Մատթ. ԻԶ. 37:

8. Մատթ. Ի. 20-23: